ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Դարբինյանի մոտ կայացած խորհրդակցության

12.02.2016թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, հրավիրյալներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Օ ր ա կ ա ր գ ա ւ մ՝

1. ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. փետրվարի 10-ի թիվ 38-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Լոռու մարզային զբաղվածության հանձնաժողովի կազմի ներկայացում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահ Արսեն Դարբինյան/

2. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջների ներկայացում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան,
Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

3. 2016թ. Զբաղվածության ամենամյա «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի շրջանակում ՀՀ Լոռու մարզին հատկացված ծրագրերի մասին /Հիմք՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 04.02.2016թ. թիվ 1/32.1/1289-16 գրությունը/:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

4. Համայնքներից ներկայացված ծրագրերի քննարկում:

/Վանաձոր, Փամբակ, Շահումյան, Զորագետ, Մեծ Պարնի, Գարգառ/

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

5. Այլ հարցեր:

Ո ր ո շ ե ց՝

Հաստատել հետևյալ ծրագրերը՝

1. Վանաձորի քաղաքապետարան. «Խաղահրապարակների բարեկարգման աշխատանքներ», իրականացման ժամկետը՝ 02.05.2016թ. - 30.06.2016թ.

2. Մեծ Պարնիի գյուղապետարան. « Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան՝ համալիրի տարածքի բարեկարգում», իրականացման ժամկետը՝ 05.04.2016թ. - 07.05.2016թ.

3. Փամբակի գյուղապետարան. «Փամբակ համայնքի գերեզմանատան ցանկապատի վերանորոգում», իրականացման ժամկետը՝ 06.07.2016թ. - 15.08.2016թ.

4. Գարգառի գյուղապետարան. «Գարգառի գերեզմանոցի ճանապարհի վերանորոգում և գերեզմանոցի տարածքի բարեկարգում», իրականացման ժամկետը՝ 11.07.2016թ. - 14.09.2016թ.:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշման պահանջներին համապատասխան /հավելված 21/ սահմանված ձևաչափով հաստատված ծրագրերի ժամանակացույցը ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

/ժամկետ՝ 2016թ. փետրվարի 15-ը/

բ/ Ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ՝ 2016թ. համար հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի ըստ համայնքների՝ ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության և դրանց կատարման իրականացման և ծրագրերի ներկայացման վերջնաժամկետների ժամանակացույցը:

/ժամկետ՝ 2016թ. փետրվարի 15-ը/

գ/ Մարզխորհրդի նիստերից մեկում օրակարգային հարցով ներկայացնել պետության կողմից աշխատանքի և զբաղվածության բնագավառում իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվությունը:

/ժամկետ՝ մինչև 2016թ. մայիսը/

2. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Ս.Գրիգորյանին՝

Ապահովել աշխատանքի և զբաղվածության բնագավառում իրականացվող ծրագրերի մասին հանրային իրազեկումը՝ աշխատանքներին ներգրավելով մասնակից կողմերին /գործընթացի կազմակերպիչներ, շահառուներ/:

/Տարվա ընթացքում/

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կազմեց՝
Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/